

տուի, այլ շարունակ գեղարուեստական յայտնի գրուածքներ կարդայ, դիտէ, ուսումնասիրէ, աշխատէ կեանքի երևոյթները լաւ ըմբռնել, շտապով հրապարակ գալն առանձին օգուտ չունի: Մենք անարդար ենք համարում մի գրուածքով հեղինակի գլխին վերջնական դատավճիռ կարդալը:

Դրբոյկը տեղ տեղ հետաքրքրութեամբ է կարդացւում. լեզուի անճշտութիւններ կան. «ուղեղս կրծելով» (էջ 3—4) «դէմինի» (5) «Նայրենախնամ իրաւաբան» (27) «նա այլեւս իմ աչքին մեծ մարդ էր» (30) «դարձաւ նաև ինձ նրախտաւոր» (30): Մի քանի տեղ կրկնուած է «գործնէութիւն», ուրեմն կամաւոր աղճատումն է գործունէութիւն բառի. կրկնուած է «վրա» այն ինչ գրւում է «յետոյ», «բահանայ» և այլն:

2. Մեր էֆենմիին ԳԲՄԻՄԲՆԸ. հրատ. տիկ. Ջարէլի. Բ. Պէնկօ. Մեծ 80ն. (թարգ.) 72 էջ. Ս. Պետերբուրգ. 1905 թ.:

Այժմեան ողւս գիւղական կեանքի մի փոքրիկ, իրական պատկերն է ներկայացնում Պէնկօյի գրբոյկը. վեց տարի տեղող երաշտից ու անբերրութիւնից գիւղական նոյն իսկ հարուստ դասակարգը աղքատացել, թշուառութեան դուռն է ընկել: Հետզհետէ ստիպուած լինելով ծախել իւր եզն ու կովը, ձին ու ոչխարը՝ գիւղացին սովից չը մեռնելու համար, ջնջին կոպէկներ ստանալու մտքով, ծառայում է ուրիշներին և մի կտոր սև հացով կերակրում իւր մերկ ընտանիքը: Ուրիշի դռանը ծառայելն ու ամբողջ օրն արիւն քրտինք թափելով տանջուելը բաւական չէ, դեռ տանտիկնոջից էլ անպատուելն ու գող ու աւազակ փաղաքշական անունների արժանանալն է բարոյապէս տանջում խեղճ գիւղացի բանուորին: Կալուածատէրերն օգուտ քաղելով գիւղացու նեղ օրերից՝ ամենաչնչին վարձով են բանեցնում նրանց, բայց ահա վերջապէս գալիս է «մեծ տօնը», առատ, պտղաբեր տարին. դաշտերը ծածկւում են ոսկեծածան արտերով ու հնձող են կանչում: Խեղճ գիւղացին էլ ցանքս չունի, որ հնձէ. կալուածատէրների աչքը լոյս. սրանք էլի կէս գնով վարձում են գիւղացիներին, որ խոտն ու արտը հնձել տան: Աշխատանքի լաւ տաք ժամանակը, երբ դժուարութեամբ կարելի էր նոր բանուորներ գտնել, մեր գիւղացի հնձուորները բոլորը միասին ցած են դնում գերանդինները և ահա պատրաստ է գործադուլը. նրանք պահանջում են կրկնակի օրավարձ: Կալուածատէրերը կատաղում են. բայց ինչ կարող

են անել, եթէ բանուորները հեռանան, հասած արտերը կը փը-
շանան և ահադին մնաս կունենան. (հանճարը կերել է բանջա-
րը» ասում է ժողովրդական առածը: Բանուորների բոլոր պա-
հանջները կատարուում են...:

Հայերէն Թարգմանութիւնը վատ չէ. պատահում են ան-
կանոն կամ սխալ դարձուածքներ, «իսկ մկիտանն ինչի՞» է շի-
նած: Մկիտանին ի՞նչ պիտի վճարես» (էջ 7). «վերցրած գա-
րու կէսը պահում ու մկիտանն է տանում» (19). մարդն (մկի-
տան—գինեվաճառ կամ օղեվաճառ) ու տեղը (գինեվաճառի
խանութը—մկիտանխանայ—) շփոթուած են: «Երեցկնոջը մշակ
մտնելով» (18). «վեր ընկաւ կեղտոտ անկողին ու քնեց»
(24). «ձգօտի ինքնագործ գլխարկներով» (27). «զարմանուլի
քիչ էր սազում նրա խորամանկ դէմքին» (34). «ոլրան ես
խիստ նեղացայ, բայց այլ ևս այդպէս չի լինել» (56) «որին
այնքան սիրահարներ կան» (57). «վերադարձաւ տէրտէքի
տանը» (66) և այլն: Ուղղագրութիւնը նոյնպէս շփոթուած է.
«կառավարութիւն», «ծախեց», «հալուել», «բանուոր», «առա-
ջուանը», «կառավարում», «կառավարիչ», «չէմ գնայ» և այլն:

3. Մեր ԷժԵՆԱԳԻՆ ԳՐԵՄԵՐԵՆԸ. հրատ. տիկ. Ջաբէլի. Գր. քահ. Պետրով. ՆՈՐ
1908 (Թարգ.) ռուսերէնից 108 էջ. 1904 թ. Ս. Պետերբուրգ.:

«Նոր Լոյս»ը տիկին Ջաբէլի հրատարակութեամբ լոյս
տեսնող «Էժանագին Գրադարանի» հինգերորդ գրքոյկն է,
տպուած ընտիր թղթի վրայ և գինն էլ շատ էժան: «Նոր Լոյ-
ս»-ի հեղինակ Պետրով ռուս քահանան յայտնի է Ուսաստա-
նում իբրև ժամանակակից գրական-հասարակական գործիչ.
Նրա աշխատութիւններից շատերը ժողովրդականութիւն են գտել
և բաւականին տարածուել ռուս ժողովրդի բոլոր խաւերում:
Այս ազատախոհ քահանան հմտութեամբ կարողանում է քրիս-
տոնէական սկզբունքները միացնել ռուս ժողովրդի այժմեան
կեանքի երևոյթների ու առօրեայ հանգամանքների հետ և որ
գլխաւորն է՝ ժողովրդին հասկանալի ոճով է խօսում ու գրում:
Գրքոյկի մէջ պարունակուած մանր պատմութիւններով արժա-
նապատիւ հեղինակն ուզում է ընթերցողներին հաւատ ներշնչել
դէպի լուսաւոր ապագան, կենդանի գործ կատարելու համար ե-
ռանդ, աշխոյժ արթնացնել առանց աչք փակելու կեանքի խա-
ւար կողմերի առաջ: Նրա ասելով՝ չարութիւնը դարերով հա-
ւաքուել է ու կանգնել մեր կեանքում իբրև մի հսկայական լեռու.